



# ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Հասարակագիտության դասավանդման մասնակից կողմերը.  
Ուսուցչի դերը

Հետազոտող ուսուցիչ՝ *Նաիրա Ղազարյան / Հասարակագիտություն /*

Վաղարշապատի Մ. Գորկու անվան հմ. 5 ավագ դպրոց

Մենթոր ուսուցիչ՝ Նարինե Վասիլյան



## Բովանդակություն

- 1 . Ներածություն – 2,3
2. Հասարակագիտության դասվանդման մասնակից կողմերը .Ուսուցչի դերը / -4,14
- 3 .Եզրակացություն -15
- 4 .Օգտագործված գրականության ցանկ -16



## Ներածություն

«Սովորական ուսուցիչը պատմում է : Լավ ուսուցիչը բացատրում է: Բարձրակարգ ուսուցիչը ցույց է տալիս : Հանճարեղ ուսուցիչը ոգեշնչում է » :

### Ուիլյամ Ուորդ

Ուսուցիչը միջնակարգ ուսումնական հաստատություններում սովորողներին զինում է գիտական գիտելիքներով, կարողություններով ու հմտություններով, լուծում կրթության, դաստիարակության և զարգացման հիմնախնդիրները, ձևավորում սովորողների գիտական աշխարհայացքը և հասարակական վարքը :

Ուսուցիչը մանկավարժական գիտության կրողն է : Նրա միջոցով են իրականացվում մանկավարժության նվաճումների ներդրումները : Ուսուցիչն անցյալի ու ներկայի հասարակական պատմական փորձը նոր սերունդներին փոխանցող թիվ առաջին անձն է : Նրա դերն անգնահատելի է մարդկային հասարակության առանձին վերցրած յուրաքանչյուր մարդու անձի զարգացման և ձևավորման համար : Ահա թե ինչու չէիս ականավոր մանկավարժ Յան Ամոս կոմենսկին ասում էր .

« Արևի տակ ուսուցչի մասնագիտությունից բարձր մասնագիտություն չկա » :

Ուսուցիչը կրտսեր դպրոցականի, դեռահասի, պատանու, երիտասարդի հոգեկան աշխարհի կերտողն է : Փրանսիացի մեծ գրող Վ. Հյուգոն գրում է .

« Կերտել հիանալի արձան և շնչավորել այն՝ լավ է, բայց զարգացնել մատաղ խելքը, յուրովի կերտել պատանու հոգին և նրան ներշնչել ճշմարտության զգացում՝ էլ ավելի լավ է » :

Ուսուցչի աշխատանքը շատ բարդ է ու դժվարին : Նրա գործունեությունը ներառում է իր քրտնաջան աշխատանքի բոլոր ձևերը, ինչպես նաև անձնային բարոյական բոլոր հատկանիշների դրսևորումները : Գնահատելով ուսուցչի գործունեությունը՝ Խ. Աբովյանը, որպես ուսուցչի բերում է իր օրինակը : Նա ասում էր .

« Ես պատրաստ եմ իմ կյանքը գոհել իմ սաների համար »

Աբովյանը երեխաներին համարում էր « Աչքի լույս», «Թանկագին գոհար», նա պահանջում էր «վերաստեղծել» երեխաներին : Ի. Պետտալոցին ուսուցչի աշխատանքը համեմատում է այգեպանի աշխատանքի հետ, որը պաշտպանում է ծառը, որպեսզի արտաքին ոչ մի ուժ չվնասի նրա արմատները, բունը, ճյուղերը և չվտանգի բնության օրենքի ընթացքը :

Ուսուցիչը իր բնույթով պետք է լինի կենսուրախ, կենսախինդ, շիտակ, ուղղամիտ, ճշմարտացի, արդարամիտ, ունենա մեղմ բնավորություն, իր և աշակերտների միջև մշակի առողջ փոխհարաբերություններ, իր սաներին համարի իր լավագույն բարեկամները, սպրի նրանցով, հարզի երախայի անձը, լինի նրբանկատ և ուշադիր, երբեք ու երբեք աշակերտին չդիտի որպես ենթարկվողի, իսկ իրեն՝ տիրապետողի դերում :



«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

Ուսուցչի վարած դասը , ինչպես եկեղեցու զանգի խորհրդավոր ձայնը , պետք է « դողանջի »:

Նրա դաս հարցնելը , ուսումնական նոր նյութի հաղորդումը , ուսուցման մեթոդների , հնարների , ու միջոցների գուգակցված կիրառումը , ողջ դասի ընթացքում աշակերտներին ակտիվ վիճակում պահելը , դիտագնական պարագաների , ուսուցման տեխնիկական միջոցների տեղը – տեղին օգտագործումը , գրատախտակին գեղեցիկ գրած մի բառը , մի անունը պետք է արվեստի նմուշների գրավչություն ունենան :

Ուսուցչի գործը մշտապես աճող մարդու կրթությունը , դաստիարակությունը և զարգացումն է : Մարդու հոգեկան աշխարհի կերտումն առաջին հերթին կախում ունի ուսուցչի գործունեությունից :

Ահա թե ինչու լավագույն ուսուցիչը , և հատկապես հասարակագիտություն դասավանդող ուսուցիչը չպետք է բավարարվի միայն իր դասավանդած առարկայի իմացությամբ . նա պետք է սովորի մշակույթից , արվեստի բոլոր բնագավառներից , սովորի հասարակական –պատմական փորձից , կյանքից , առօրյայից , իր ժողովրդի հարուստ ավանդույթներից , ժամանակակից տեղեկատվության « մշտահոս հեղեղից » և ամենից քաղելով գիտելիքների նեկտարը , համադրում / սինթեզում / է այն և խտանյութը տանում իր սաներին :

Դժվար է ասել , թե որտեղից է սկսվում բազմահմուտ ուսուցչի գործունեությունը և որտեղ է ավարտվում : Յուրաքանչյուր քայլափոխի մենք առնչվում ենք ուսումնադաստիարակչական որևէ երևույթի , փաստի , դեպքի : Եվ որպեսզի նա կարողանա լուծել իր առջև հառնած բոլոր խնդիրները , պարտավոր է տեղյակ լինել մանկավարժական գիտության բոլոր նորույթներին , նոր հայեցակարգերին , նոր նվաճումներին , առաջավոր փորձին :



## Հասարակագիտության դասավանդման մասնակից կողմերը . Ուսուցչի դերը

Հասարակագիտությունը բառի կազմությունը ներառում է «հասարակություն» և «գիտություն» բառերը և նշանակում է գիտություն հասարակության մասին : Հասարակագիտական են համարվում այն գիտակարգերն ու հարացույցերը , որոնց ուսումնասիրության օբյեկտը հասարակությունն է : Հասարակագիտության ուսումնասիրության առարկան իր մեջ ընդգրկում է մի շարք հիմնահարցեր : Այսպես , հասարակագիտությունը կարելի է համարել նաև գիտություն մարդու կյանքի մասին , որը կենսագործունեություն է ծավալում նաև հասարակության մեջ :

Հասարակագիտության ամերիկացի մասնագետ Սաքսը նշել է , որ « հասարակագիտություն» /social study/ եզրույթն առաջին անգամ գործածվել է Էդմունդ Չեյմսի կողմից 1897 թվականին : Չեյմսն առաջարկել է հասարակական բոլոր գիտությունները միախմբել «հասարակագիտություն » ընդհանուր անվան ներքո :

Հասարակագիտությունը շատ լայն հասկացություն է , այդ պատճառով էլ բազմաթիվ սահմանումներ ունի : Խորհրդային ժամանակաշրջանում հասարակագիտությունը միջնակարգ դպրոցի բարձր դասարաններում դասավանդվող կարևորագույն առարկաներից էր : Հասարակագիտության խորհրդային մոտեցումը հիմնվում էր փիլիսոփայության , քաղաքատնտեսության և գիտական կոմունիզմի միավորված դասավանդման վրա : Խորհրդային մոտեցումն այսօր կիրառելի չէ բովանդակային իմաստով , քանի որ այն հիմնված էր միայն մարքսիզմի գաղափարախոսության վրա : Հետևաբար այսօր Հայաստանում աշխատանքներ են տարվում ձևավորելու հասարակագիտության նոր մոտեցում :

Այդ տեսանկյունից կարևոր ենք համարում ներկայացնել հասարակագիտության մասին սահմանումներից երկուսը .

« Հասարակագիտությունը դպրոցի հանրակրթական ծրագրի այն մասն է , որի նպատակը ժողովրդավարական հասարակության կյանքին մասնակող քաղաքացիներ պատրաստելն է»

Շեյվեր

« Հասարակագիտությունը հասարակական գիտությունների և հումանիտար գաղափարների միջառարկայական փոխկապակցվածություն է , որի նպատակն է խնդիրներ լուծելու և որոշումներ կայացնելու փորձ ձեռք բերելու միջոցով ձևավորել հասարակական կարևորագույն խնդիրներին առնչվող քաղաքացիական հմտություններ » :

Բարթ

« Հասարակագիտությունը մանկավարժական նպատակներով պարզեցված հասարակական գիտություններն են » :

Վելսի և Ռոնսկ



Հասարակագիտության առարկաների դասավանդման գործընթացի բոլոր մասնակիցները հասարակության անդամներ են : Ամենաշահագրգիռ կողմերն են ծնողները , աշակերտները, դպրոցի վարչական ղեկավարությունը , կրթական հաստատությունները , համայնքի անդամները , և որ ամենակրկնորը ` ուսուցիչը : Ներկայացնենք ուսուցչին որպես ամենակարևոր շահառու .



- Ուսուցչի դերը
- Որպես շահառու
- Որոշումներ կայացնող
- Նյութը ներկայացնող
- Որպես խնամող
- Որպես առաջնորդ

Ներկայումս խոշոր բանավեճերի առարկա է ուսուցչի դերը դասարանում : Խնդիրն ավելի է բարդանում հատկապես հասարակագիտական առարկաների դասավանդման հետ կապված : Բանն այն է , որ ի տարբերություն ճշգրիտ գիտությունների , հասարակական գիտություններն առավել ճկուն են և մեծապես ենթակա են դրանք դասավանդող ուսուցիչների անհատական մեկնաբանություններին , ինչպես նաև տվյալ ժամանակաշրջանի գերիշխող հասարակական – մշակութային ազդեցություններին :

Հայաստանում իրականացվող կրթական բարեփոխումների գործընթացում բացառիկ կարևորություն ունի «Հասարակագիտություն » առարկան: Բացի զուտ առարկայական խնդիրների ուսուցումից ,հասարակագիտությունը լուրջ առաքելություն ունի քաղաքացիական դաստիարակության , քաղաքացու ձևավորման գործում : Դասընթացի ուսուցումը պետք է կառուցվի այնպիսի մեթոդների , գնահատման ձևերի վրա , որոնք կհամապատասխանեն սահմանված նպատակներին , և այստեղ հարկ է նշել , և մեկ անգամ ևս կարևորել ուսուցիչների պատրաստվածությունը , գիտելիքները և մի շարք այլ գործոններ ...

Ուսուցիչները պետք է կարողանան աշակերտների մեջ սերմանել այն գաղափարը , որ հասարակական գիտությունները հարաբերական են , դրանց նկատմամբ կարող են լինել ամենատարբեր կարծիքներ և մոտեցումներ ,և որ դրանք պետք է ընդունվեն որոշ վերապահումներով :



Հասարակական գիտությունները դիտարկվում են որպես մեկնողական առարկաներ ,որոնք ուսումնասիրում են այն գործընթացները , որոնց միջոցով մարդիկ «կառուցում » են իրականությունը : Այդ գործընթացներից ամենակարևորը հասկացումն է , հետևապես հասարակագիտությունը դիտվում է որպես ոչ այնքան օրինաչափություններ վեր հանող ,որքան որպես անհատականը , յուրօրինակն ու անկրկնելին «հասկացող » գիտություն , որի խնդիրն է պարզել , օրինակ , թե ինչպես էին մտածում այս կամ այն դարաշրջանի մարդիկ , ինչպես էին ընկալում աշխարհը և դրա արդյունքում ինչպիսի փոխհարաբերություններ էին հաստատում միմյանց հետ :

Տարբեր տեսության ներկայացուցիչներ տարբեր տեսակետներ ունեն ուսուցչի դերի վերաբերյալ : Ուսուցչի դերի մասին կան բազմաթիվ մոտեցումներ , որոնցից հասարակագիտության դասավանդման համատեքստում առավել կարևորները կներկայացնեմ ստորև .

Քննադատական տեսության ներկայացուցիչները ուսուցչի դերի վերաբերյալ ունեն տարբերվող տեսակետ : Նրանք հերքում են պոզիտիվիստների այն մոտեցումը , որ հետազոտությունը կարող է արժեքային գունավորում չունենալ , պնդելով հակառակը , որ այդ մեթոդները հնացած են և անհրաժեշտ է մշակել գիտելիքի ստեղծման նոր հայեցակարգեր :

Ժիրոն և Մաքլարենը / 1986 / առաջարկում են «ուսուցիչը որպես ինտելեկտուալ վերափոխող » հասկացությունը : Ինտելեկտուալ վերափոխողը նրանք են , ովքեր զբաղվում են տարբեր մտավոր ու մանկավարժական գործունեությամբ , որի նպատակն է ուսուցումը և ուսումնառությունը ներմուծել անմիջականորեն քաղաքական բնագավառ : Նրանք պնդում են , որ դպրոցում սովորելն ինքնին պայքար է թե՛ գաղափարի , թե՛ իշխանության համար : Նման ուսուցիչներն աշակերտներին վերաբերվում են որպես գործուն մարդկանց , հատուկ ուշադրություն են դարձնում գիտելիքի ստեղծման և փոխանցման հարցերին խթանում են երկխոսությունները և գիտելիքը դարձնում իմաստավորված , կապակցված և ընդհանրապես ազատագրող : Նրանք ընդգծում են գիտելիքի իմաստավորման և մտքի ազատության գերակայությունը հասարակագիտական առարկաների բովանդակության և դրա հայեցակարգային ընկալման նկատմամբ :

Լիստոնը և Չեյքները /1987/ պնդում են , որ « Ուսուցիչը որպես մանկավարժ» պետք է նախ և առաջ ձգտի սովորեցնել աշակերտներին , թե ինչպես բարոյական համոզմունքներ ձևավորել և դրանք քննադատորեն վերլուծել : Նրանք գտնում են , որ «ինտելեկտուալ վերափոխողի» գաղափարը կաղապարում է ուսուցչին ` զրկելով նրան այլընտրանքային տեսակետներ ունենալուց :

Արդյունավետ է այն ուսուցիչը , որը միաժամանակ կիրառում է և՛ ավանդական , և՛ առաջադիմական տեխնիկաներ ի լրումն օգտվելով նաև կառուցողական մտածողության երկու ճյուղերից ` ճանաչողական և հասարակական –մշակութային :

Հաշվի առնելով ամերիկյան գիտնականների հետազոտությունները , կարելի է նշել , որ հասարակագիտական առարկաների արդյունավետ ուսուցիչները միաժամանակ բովանդակության , մշակույթի փոխանցողներ են , որոշում կայացնողներ են , գիտական մտքի միջնորդներ , ռեֆլեկտիվ մտածողներ և վերափոխող ինտելեկտուալներ են :



«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

Ուսուցչի որպես նյութը ներկայացնողի մասին ժամանակակից տեսակետը սկիզբ է առել գործընթաց- արդյունք հարաբերության մասին ստեղծված գրականության մեջ՝ Ռոզենշային «ուղղակի դասավանդման» գաղափարից / 1986 / , ըստ այս տեսակետի աշակերտների ուսումնառությունը առավել արդյունավետ է լինում , երբ ուսուցիչները նախ ներկայացնում են ճիշտ կառուցված նյութը և օգնում նրանց կապ ստեղծել այդ նյութի և իրենց արդեն ունեցած գիտելիքների ու տեղեկությունների միջև , ապա ստուգում յուրացրած մակարդակը , ուղղում սխալները և այլն :

Սկզբում/1987/ գտնում է, որ հետազոտական աշխատանքներ կատարելիս անհրաժեշտ է առաջնորդվել «ուսուցչի դերի և դասավանդման գործընթացի առավել ընդարձակ և համապարփակ ընկալումով »:Ըստ նրա առաջարկած մոդելի ուսուցիչը պետք է հասկանա թե ինչ պետք է սովորեն աշակերտները , ինչպես պետք է դա սովորեցնել : Ըստ սկզբումնի ուսուցչի դերի կարևորագույն տարրերից են մանկավարժական գիտելիքները և մանկավարժական անդրադարձն ու կշռադատումը : Նա գտնում էր , որ գաղտնիքի բանալին գտնվում է առարկայի բովանդակության և մանկավարժական հմտությունների խաչմերուկում . դա ուսուցչի ունակությունն է նյութի բովանդակությանն այնպիսի ձև տալ , որը հզոր է մանկավարժական տեսանկյունից , սակայն ըմբռնելի է տարբեր ընդունակություններ և գիտելիքներ ունեցող աշակերտների համար : Անհրաժեշտ է հաշվի առնել երեք կարևոր գործոն,որոնք են՝ ուսուցչի

- ❖ առարկայական գիտելիքները,
- ❖ մանկավարժական գիտելիքները ,
- ❖ դասավանդելու եղանակներն ու ձևերը :

Նյութը ներկայացնողի դերն այն հիմնական դերերից է , որով հանդես է գալիս հասարակական գիտությունների մասնագետ մանկավարժների բացարձակ մեծամասնությունը : ԵՎ որպես նյութը ներկայացնող պետք է հաշվի առնեն մի շարք հարցեր մանկավարժական գիտելիքների ոլորտից .

- ինչպես նյութը ներկայացնել տարբեր տարիքի աշակերտների,
- ինչպես ներկայացնել գիտելիքի այլընտրանքային մեկնաբանությունները ,
- ինչ հարաբերություն կա ուսուցչի թեմայի մեկնաբանության և աշակերտների կողմից ընկալման եղանակների և մակարդակների միջև :

Հասարակագիտական առարկաների ուսուցչի դերի գլխավոր գործառնությունը որոշումների կայացումն է , և սա վերաբերվում է այն ուսուցիչներին ,ովքեր ձգտում են աշակերտների մեջ զարգացնել խորհրդածելով , կշռադատելով որոշումներ կայացնելու հմտություններ : Այդպիսի ուսուցիչներին և դասարանը տեսաբանները անվանում են «կշռադատող» / ռեֆլեկտիվ / : «կշռադատող» դասարանում ուսուցիչը կոչված է խթանել աշակերտների մտածողությունը, խրախուսել երկխոսությունները և սովորեցնել աշակերտներին տարբեր գաղափարների արժեքը գնահատել : Այս գործընթացում աշակերտներն ուսուցչի օրինակով և օգնությամբ դառնում են որոշումներ կայացնողներ , իսկ ուսուցիչը հաղես է գալիս որպես խթանող .առաջադրելով հարցեր , կազմակերպում քննարկում և այլն : Ռեֆլեքսիա եզրույթն





«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

օգտագործելիս Շալմանը /1987/ նշել է , որ դա հենց այն է ինչ ուսուցիչն անում է , երբ հետադարձ հայացք է գցում ուսուցման-ուսումնառության ընթացքին և դրա հիման վրա վերականգնում կամ վերհիշում է իրադարձությունները , հույզերը կամ ձեռքբերումները : Հենց սա էլ հնարավորություն է տալիս ուսուցչին սովորել սեփական փորձի հիման վրա :

Շատ տեսաբաններ այն կարծիքին են , որ կշռադաժող , խորհրդաժող ուսուցիչները մարդկանց վերաբերվում են մեծ պատասխանատվությամբ , գիտելիքները համապատասխանեցնում են աշակերտների անհատական մտածողությանը , կենսափորձին :

Ցանկալի է , որ որոշումներ կայացնողի դերն իրականացնելիս ուսուցիչները առաջնորդվեն հետևյալ հարցերով , թե ուսուցիչները .

- ❖ ինչպես են որոշումներ կայացնում ,
- ❖ որոշումների կայացման գործընթացի ինչպիսի օրինակ են ծառայում իրենց աշակերտներին ,
- ❖ ինչպես են հասարակական որոշումները դարձնում աշակերտների իրական կյանքի մի մասը :

Հասարակագիտական առարկաների ուսուցիչների մի մասը աշակերտների հետ իրենց բազմաբնույթ հարաբերությունների բերումով ամեն օր մի շարք դերեր են կատարում , ինչպես նյութը և գիտական միտքը ներկայացնողի , տեղեկություններ հավաքողի , հետաքննողի , որոշումներ կայացնողի և խորհրդաժողի դերերը : Սակայն չպետք է մոռանալ , որ ուսուցչի կարևորագույն դերը խնամողի դերն է , և հասարակագիտության ուսուցիչը պետք է հանդես գա նաև այդ դերում : Ուսուցիչը որպես խնամող հանդես է եկել դեռևս պատմության հնագույն ժամանակներում :

Հոգու խնամքի և խնամող-խորհրդատու ուսուցչի մասին տեսությունն իր ծաղկմանն է հասել հունական Պալդեյայի կրթական համակարգում :

Հայ փիլիսոփա Դավիթ Անհաղթի ջանքերով խնամքի գաղափարը 5-6-րդ դարերում բերվել է հայոց կրթական միջավայր , որը մինչ օրս ներկա է հայ ուսուցիչներից շատերի հոգեկերտվածքում . նրանք ի բնե խնամող են , ինչը չկա արևմուտքում : Դասարանը և դպրոցն այն վայրերն են , որտեղ աշակերտները և ուսուցիչները գտնվում են բազմատեսակ փոխազդեցությունների մեջ , հոգ են տանում մեկը մյուսի հանդեպ , խնամում են միմյանց , որը ներգործում է թե՛ աշակերտների և թե՛ ուսուցիչների համոզմունքների , գիտելիքի , գործողությունների և ձգտումների վրա :

Նոդդինգսի /1988/ խնամք գաղափարը վերաբերում է « կապակցված դասավանդմանը » կամ ուսուցչի այն ունակությանը , երբ կարողանում է նայել աշակերտների աչքերի մեջ և նրանց մղել ոչ միայն հասկանալու հասարակական հարցերը , այլ նաև դրանք իրական միջավայրին , համատեքստին կապելու , մի շարք տարբեր տեսանկյուններից ընկալելու :

Ըստ Նոդդինգսի խնամքը բավական մեծ խնդիր է , և այսօր խնամքի կարիք ավելի շատ կա , քան անցյալում : Ուսուցիչները պետք է ոչ միայն խնամեն աշակերտներին , այլև նրանց մեջ պետք է զարգացնեն խնամքի և հոգատարության զգացում : Ավագ դպրոցի աշակերտները գերադասում են ունենալ խնամող ուսուցիչներ : Կապվածությունը ուսուցչի , այլ աշակերտների և առարկայի բովանդակության հետ դասարանից վերացնում է



«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

միայնակության և չհասկացված լինելու զգացումները , առաջացնելով վստահության , փոխօգնության և միասին դժվարությունները հաղթահարելու տրամադրվածություն : Խնամող ուսուցիչները դպ.րոցի այն անհրաժեշտ հենակետն են , առանց որի դպրոցը չի կարող կայանալ որպես արդյունավետ ուսումնական համայնք :

Ցանկալի է , որ որպես խնամող ուսուցիչները առաջնորդվեն հետևյալ հարցերով .

- ինչպես են խնամք և հոգատարություն դրսևորում և ինչ եղանակներով են խրախուսում հասարակագիտությունը կապել հասարակական խնդիրների հետ ,
- ինչ եղանակներով են աշակերտների մեջ հասարակական – քաղաքական իրադարձություններին մասնակցելու , քաղաքացիական խնդիրների վերաբերյալ ավելի շատ բան սովորելու և դրանց մասին բարձրաձայն խոսել փորձելու ձգտում առաջացնում ,
- ինչպես են ուսուցիչներն իրենք իրենց մեջ հոգածություն զարգացնում քաղաքացիական խնդիրների նկատմամբ :

Ուսուցիչները պետք է լինեն առաջնորդ : Մա ժողովրդավարական հասարակության նոր մարտահրավեր է , ինչպես իդեալական ժողովրդավարական հասարակությունում քաղաքացին է առաջնորդ , այնպես էլ ուսուցիչը : Ուսուցչի առաջնորդող դերը կարևոր է դպրոցում , քանի որ ուսուցիչների հմուտ առաջնորդությունից է կախված աշակերտների առաջադիմությունը , ինչպես նաև դպրոցի ընդհանուր արդյունավետությունը : Քրոուդերը / 2002/ և նրա գործընկերները պնդում են , որ մանկավարժների համար կարևոր է իմանալ և հիշել առաջնորդության հինգ սկզբունքները .

- Սկզբունք առաջին .Ուսուցչական առաջնորդությունը գոյություն ունի ,այն իրական է : Այո իրական երևույթ է , քանի որ այժմ էլ կարող ենք հանդիպել դպրոցում և կարելի է նույնիսկ նկարագրել կոնկրետ հատկանիշներով : Ուսուցչական առաջնորդությունն իրականում գոյություն ունի : Եթե ուսուցիչը առաջնորդելու ձգտում չունենա , հազիվ թե հնարավոր լինի ուսուցիչների մասնագիտական զարգացման և կրթական բարեփոխումների նոր մոդելներ ստեղծել : Ստորև ներկայացնում են այն հիմնական արժեքները ,որոնք պետք է կարևոր լինեն իր մասնագիտության նկատմամբ գործնական և պատասխանատու վերաբերմունք ունեցող յուրաքանչյուր ուսուցչի համար / մեջբերված է Քրոուդեր 2022 /
  - ❖ Ուսումնառությունը –ուսուցիչը աշակերտի հետ միասին ներգրավված է ուսումնառության գործընթացում ,
  - ❖ Մասնակցությունը – ներկայացվում է ուսուցչի առաջընթացը և զարգացումը ,
  - ❖ Համագործակցությունը – դպրոցում և դպրոցից դուրս գործընկերային և համագործակցային հարաբերությունները ,
  - ❖ Մասնագիտական փոխօգնությունը – արձանագրություններ կազմել , փաստաթղթեր ստեղծել ցանկալի արդյունքներին հասնելու ուղիների քննարկման համար ,
  - ❖ Գործունեությունը - բացահայտ մասնակցությունը դպրոցին առնչվող խնդիրներին ,որը ուսուցչի բարոյական նպատակներից մեկն է :



- Սկզբունք երկրորդ . Ուսուցչական առաջնորդության հիմքում ընկած է հեղինակության տեսությունը . Ինչպես Քրատուդերը , այնպես էլ շատ մասնագետներ գտնում են , որ ուսուցիչները բավարար չափով ճանաչված չեն որպես դպրոցում կրթական գործընթացի հնարավոր կամ իրական առաջնորդներ :  
Թռուցիկ հայացք ձգելով կրթության ոլորտի ղեկավարման և առաջնորդման պատմությանը` կտեսնենք որ անցյալի փորձն ու հասկացությունները բավարար չեն առաջնորդելու նոր ձևերի համար , քանի որ անցյալ տասնամյակներում թե՛ կրթական քաղաքականությանը և թե՛ կրթության ղեկավարման տեսությանը հատուկ էր միևնույն արատավոր սկզբունքը . առաջնորդելու իրավունքն ու պարտականությունները վերագրվում էին որոշակի պաշտոնների : Այս խիստ սահմանափակ մոտեցումը մեղմելու են գալիս կրթության ոլորտի ղեկավարման , առաջնորդման հետևյալ չորս գործնական տեսությունները .
- ✓ Վերփոխող առաջնորդման տեսությունը շեշտում է անհատի և անհատական հատկանիշների կարևորությունը հասարակական և մշակութային փոփոխությունների խթանման գործում : նրանք այն մարդիկ են , ովքեր աշխատում են ընդհանուր նպատակների իրականացման ուղղությամբ , այլ ոչ թե՛ նեղ անհատական շահերից բխող :
- ✓ Կրթող առաջնորդման տեսությունը կապված է հենց դպրոցի մշակութային կյանքին , որը չի կարող առանձնացվել ուսուցիչների աշխատանքից : Բեյթսը / 1992 / հաստատում է մշակութային ստեղծման և սերմանման կարևորությունը , երբ ասում է , որ կրթական առաջնորդը ի թիվս այլ պարտականությունների պետք է նաև ընտրություն կատարի և այդ մասին բարձրաձայնի , ներգրավվի ժամանակի մշակութային պայքարում թե՛ դպրոցական միջավայրում և թե՛ լայն հասարակայնության մեջ , սակայն ըստ նրա հազիվ թե այն կարողանա ծառայել իր այդ կոչմանը միայն վարչական ղեկավարության ազդեցության ներքո : Այո այստեղ էլ մեծ է ու կրևոր ուսուցչի դերը :
- ✓ Առաջնորդման որպես կազմակերպական որակի մասին տեսությունը առավել ժամանակակից մոտեցում է , որտեղ որոշ չափով ուսուցիչը սկսում է դիտարկվել որպես առաջնորդ , քանի որ կենտրոնանում է ավելի շատ կազմակերպական գործընթացների վրա / ուսումնական ծրագրերի ստեղծումը և կազմակերպումը / :
- ✓ Հեղինակային տեսությունը . ըստ այս տեսության ներկայացուցիչների ավանդական մոտեցումը դանդաղեցնում է դպրոցի շարունակական բարեփոխման և զարգացման ընթացքը , քանի որ այն արդյունավետ կերպով չի կարողանում գնահատել և օգտագործել դպրոցի գլխավոր գործառույթին , դերի ամենամոտ կանգնած անձանց` ուսուցիչների առաջնորդական ունակությունները : Այսինքն դպրոցը պետք է ընդունի , որ ուսուցիչների առնվազն մի մասն ունի առաջնորդման այն բոլոր ունակություններն ու հմտությունները , որոնք սահմանված են հեղինակային տեսությամբ :

- Սկզբունք երրորդ . Ուսուցչական առաջնորդությունն առանձնահատուկ է : Առանց ուսուչական առաջնորդության դպրոցի վարչական ղեկավարները , որքան էլ հմուտ և ունակ լինեն , միևնույն է չեն կարողանա ապահովել ուսուցման և ուսումնառության գործընթացների նկատմամբ համադպրոցական մոտեցումների բարելավումն ու զարգացումը :  
Ուսուցիչները բարդ , նուրբ և պատասխանատու դեր ունեն համադպրոցական մանկավարժական զարգացման մեջ , որը չի արտացոլվում ղեկավարների տեսություններում :  
Ուսուցչական առաջնորդությունը դպրոցական նպատակների մշակման , խթանման , ինչպես նաև դպրոցի հաջողության համար անհրաժեշտ պայման է : Հետևողական կրթական փիլիսոփայություն որդեգրած դպրոցում ավելի հեշտ է բարելավել անհատական դասավանդումը` դարձնելով այն ավելի խորն ու արդյունավետ , իսկ մասնագիտական վարպետությունը , դա դպրոցի ներդաշնակ զարգացման բանալին է :  
Ընդհանրապես պետք է նշել , որ դպրոցի գոյությունը , զարգացումը , կենսակերպը տեղի են ունենում ուսուցչական առաջնորդության շնորհիվ :  
Քրաուդերը և նրա գործընկերները պնդում են , որ ուսուցչական առաջնորդությունը ղեկավարման առանձնահատուկ ձև է , որ ուսուցիչները հենց այն մարդիկ են , ովքեր պետք է առաջնորդի դեր կատարեն մի աշխարհում , որտեղ գիտելիքների ստեղծումը համայնքի և համընդհանուր զարգացման կարևորագույն պայման է :
- Սկզբունք չորրորդ . Ուսուցչական առաջնորդությունը բազմաբնույթ է :  
Առաջնորդ և առաջնակարգ ուսուցիչներ կարելի է հանդիպել և՛ ուժեղ , և՛ թույլ դպրոցներում , բոլոր առարկաների ոլորտներում : Ուսուցիչները տարբեր են , ունեն տարբեր դիքորոշումներ տարբեր որակներ , տարբեր քաղաքական ուղղություններ , տարբեր տարիքի են , և հաշվի առնելով որոշակի սահմանափակումներ բնորոշենք առաջնորդ ուսուցչին . Նա պետք է լինի ջերմ , վստահելի , անձնուրաց անհատ , նվիրված լինի իր աշխատանքին , գործընկերներին և դպրոցին : Պետք է ունենա հաղորդակցվելու հրաշալի ունակություն , աշակերտների և գործընկերների հետ արդյունավետ հարաբերություններ հաստատելու համար : Պետք է ունենա տեսական և գործնական խորը գիտելիքներ իր առարկայի և ընդհանուր մանկավարժության բնագավառում և տիրապետի տեխնիկական հմտություններին : Հասարակագիտական առարկաների արհեստավարժ ուսուցիչն այս բոլորի հետ միասին նաև լավ գիտի կրթական քաղաքականությունը , չափորոշիչները , իր համայնքի և դպրոցի առանձնահատկությունները : Իրենց յուրահատուկ դիրքի շնորհիվ առաջնորդ ուսուցիչները հատկապես ունակ են զարգացնել և հարստացնել դպրոցի ընդհանուր կենսակերպը և առաքելությունը :





«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

- Սկզբունք հինգերորդ . Ուսուցչական առաջնորդությունը հատկանիշ է , որը կարելի է դաստիարակել ու զարգացնել : Ուսուցչական առաջնորդության մասին խոսելիս մի շարք հարցեր են առաջանում : Արդյո՞ք բոլոր ուսուցիչներն առաջնորդի որակներ ունեն , կամ կարո՞ղ են առաջնորդներ լինեն : Ինչպե՞ս : Թվում է թե ոչ ,սակայն բոլորն էլ կարող են իրենց մեջ առաջնորդելու կարողություններ և հմտություններ զարգացնել և այդ դեպքում միայն շատերին կհաջողվի դառնալ առաջնորդ :  
Ուսուցիչները նախ պետք է հասկանան , որ առաջնորդելու հմտություններ զարգացնելու ձևերից մեկը դա առաջնորդելու էությունը հասկանալն է , և որ ամենակարևորը ուսուցիչներին պետք է տրվի հավելյալ իրավունք ինքնուրույն կազմելու ուսումնական ծրագրերը , տարբեր բաղադրիչներ , գնահատման գործիքներ , այսինքն բովանդակային ազատությունը կնպաստի ուսուցչի արդյունավետ գործունեության , նրա դերի ու որակների փոփոխությանը :

Այժմ ներկայացնեմ ուսուցչական առաջնորդության զարգացման համար անհրաժեշտ չորս պայմանները ըստ Զրաուդերի և նրա գործընկերների / 2002 / .

- ❖ Ուսուցչական առաջնորդության իրական գոյության ճանաչումն ու ընդունումը հանրության և մասնագիտական շրջանների կողմից :
- ❖ Տնօրենի և վարչական ղեկավարության գործուն աջակցությունը :
- ❖ Դպրոցի բարեփոխման և արդիականացման գործընթացում ուսուցիչների մասնակցության և դերի ընդլայնումը :
- ❖ Դպրոցի համար ուսուցչական առաջնորդության օգտակարության և դրական արդյունքների ճանաչումը :

Այժմ ներկայացնենք ուսուցչական առաջնորդությանը խոչընդոտող հանգամանքները .



- Ես ընդամենն ուսուցիչ եմ մտածելակերպը :
- Ինքնավստահության պակասը :
- Այդ հասկացության ոչ հստակ ընկալումը :
- «Ես ընդամենն ուզում եմ դասավանդել » դիքորոշումը :
- Չարգացման ժամանակ չկա :
- Համակարգ , որն առաջնորդելու գործառնությունը վերագրում է միայն տնօրենին :
- Կարող է իրավունքների և պարտականությունների խառնաշփոթ առաջացնել :
- Համոզմունքը , որ մեծ թվով « խոհարարների մասնակցությունը փչացնում է ապուրը » :
- Ոչ մի պարզև հավելյալ ջանքերի դիմաց :
- Առաջնորդ ուսուցիչների ձախողման նախադեպեր :
- Այնպիսի լեզվի գործածությունը ,որն ուսուցիչներին դնում է ստորակարգ աստիճանի վրա / «պետեր» և «ենթականեր»/
- Գործընկերների կողմից ճնշման գործադրումը
- Տնօրենի կողմից աջակցության պակասը :



«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

Այժմ ներկայացնենք հաղթահարման եղանակները .



- Պետք է խրախուսել և պարգևատրել առաջնորդելու ներուժ ունեցող ուսուցիչներին :
- Այդպիսի ուսուցիչներին գործելու հնարավորություն տալ :
- Առաջարկել օգտվել ուսուցչական առաջնորդության մոդելներից :
- Ապացուցել , որ առաջնորդ ուսուցիչներն իրական բարեփոխումներ են առաջ բերում :
- Իրական և ընդարձակ լիազորություններ և պատասխանատվություն տվեք ուսուցիչներին :
- Հստակորեն սահմանեք այն ոլորտները կամ հարցերը , որոնց շրջանակներում ուսուցիչները կարող են հանդես գալ որպես առաջնորդներ և որոշումներ կայացնել :
- Աշխատավայրում խրախուսել մասնագիտական զարգացումը և փոխօգնությունը :
- Ժամանակ հատկացրեք մասնագիտական երկխոսությանը :
- Հստակ բացատրեք , որ առաջնորդումը և իշխանության իրականացումը տարբեր հասկացություններ են :
- Վերահսկեք ձեր հաղորդակցության լեզուն :
- Արտահայտվեք ժողովրդավար ձևով :
- Գործընկերներին նույնպես ներառեք տվյալ գործունեության մեջ :
- Հնարավորին չափով աջակցեք :
- Առաջնորդ ուսուցիչների հետ հաղորդակցության ուղիներ ստեղծեք նման ուսուցիչների համար :

Հայաստանյան դպրոցների համար հատկապես կարևոր է ուսուցիչների համագործակցությունը , արդյունավետ գործընկերային հարաբերությունները , արհեստավարժությունը , դպրոցական բոլոր ռեսուրսների հմուտ կառավարումը և իհարկե ապահով ու բարեկեցիկ միջավայրը :

Արդյունավետ գործընկերային հարաբերությունները վերաբերվում են ուսուցիչների փոխազդեցությունների բնույթին : ուսուցիչները պետք է օգնեն և աջակցեն միմյանց , լինել մեկը մյուսի համար լավ դատավոր , լավ խորհրդատու , լավ քննադատ : Միմյանց օգնելով և խրախուսելով , մի թիմ դառնալով նրանք կկարողանան իրականացնել այն նպատակները որոնք ընդհանուր են բոլորի համար : Շատ կարևոր է դպրոցի տնօրենի ժողովրդավար ոճը :

Դպրոցներին անհրաժեշտ են արհեստավարժ ուսուցիչներ : Ուսուցիչները պետք է զարգացնեն իրենց առարկայական գիտելիքները , և միաժամանակ պետք է կատարելագործեն մանկավարժական գիտելիքները , քանի որ այս երկուսի միասնությունը նպաստում է առարկայի դասվանդման արդյունավետ եղանակների իմացությունն ու հմտությունները :

Համատեղ ղեկավարումն ու առաջնորդումը մի գործընթաց է ,որը ենթադրում է առաջնորդ ուսուցիչների և տնօրենների միասնական գործունեություն ուղղված դպրոցի արդյունավետության բարձրացմանը :



Եզրակացություն . Ուսուցիչը որպես կարևոր շահառու , նրա դերը .

«Ուսուցչի խոսքը պետք է լինի կտրուկ ,կարճ,ազդու , վճիռն անդարձ »

Ն . Աղբայան

Ուսուցչի մասնագիտական պատրաստվածությունը դա ոչ միայն նրա առարկայական գիտելիքներն են , այլև մանկավարժական վարպետությունը , բազմակողմանի զարգացվածությունը , որոնք կարևոր են 21-րդ դարի համար : 21-րդ դարի ուսուցիչը ոչ միայն պետք է հարուստ գիտելիքներ ունենա , համակողմանի զարգացվածություն , այլ պետք է այդ ամենի հետ միասին կարողանա իր գիտելիքներն ու փորձը դարձնել աշակերտի սեփականությունը : Նոր մարտահրավերները պահանջում են ուսուցչից անընդհատ համարել գիտելիքները , կարողությունները և հմտությունները , հայտնագործել նոր մեթոդներ և կատարելագործել հինը : Ուսուցիչը պետք է շարունակաբար հարստացնի իր գիտելիքի պաշարը :

«Գիտելիքները հայտնագործվում են գիտելիքներով » - Մ. Ն. Սկատկին , և այդ եթե մտապահված գիտելիքներ չկան , ապա ավելորդ է խոսել նոր գիտելիքներ հայտնագործելու մասին , դրա համար էր , որ Նապոլեոնը գիտելիքը համարում էր խելքի բուրգ :

Ուսուցումը նշանակալից հասարակական գործընթաց է , ուսումնառությունը աշակերտների կյանքն է : Այդ պատճառով էլ ուսուցիչների դերը բացառիկ կարևորություն ունի :

21-րդ դարը կտրուկ փոփոխությունների , մոր մարտահրավերների , փոփոխվող հարաբերությունների և հաղորդակցման ժամանակշրջան է , ինչը տանում է մեզ դեպի գլոբալացում , սա գործընթաց է ,որին պետք է պատրաստ լինի ցանկացած ուսուցիչ :

Հատկապես հասարակագիտական առարկաների ուսուցիչները պետք է ունենան ավելի ազատ մտածողություն , լինեն ավելի ճկուն , պետք է զբաղվեն ինքնազարգացմամբ և ինքնակրթությամբ , լրացնեն ազգային ու համամարդկային արժեքների մասին գիտելիքների պակասն իրենց կրթության մեջ , և փորձեն հասկանալ նոր սերընդի կրթական կարիքները :

Ուսուցիչն այբան ժամանակ է ընդունակ նպաստելու աշակերտների կրթությանը , քանի դեռ շարունակում է զբաղվել ինքնակրթությամբ: Ուսուցիչը պետք է տիրապետի նոր գիտելիքների և հմտությունների , շարունակաբար և անդադար բարձրացնի իր մասնագիտական , մանկավարժական և մեթոդական պատրաստության մակարդակները :

« Ուսուցիչը պետք է անկեղծ սիրով և ջերմ ոգևորությամբ նվիրվի դպրոցին » :

Ի. Հարությունյան

« Դպրոցի հոգեկան կյանքի աղբյուրն ուսուցիչն է » :

Գ . Էդիլյան



## Գրականության ցանկ

- ✓ Հասարակագիտության ոլորտում արդի հիմնահարցեր – Ձեռնարկ մանկավարժների համար , /Տիգրան Մեծ -2005 /  
Հեղինակներ՝ Ս .Խաչատրյան , Ս. Պետրոսյան , Ա. Արնաուդյան, Ա. Չոհրաբյան, Մ. Առաքելյան , Հ. Խաչատրյան , Գ. Վարելլա
- ✓ Հայ մանկավարժության պատմություն- Յոլակ Սիմոնյան , /Մանկավարժ 2006 /
- ✓ Մանկավարժություն – Ուսումնական ձեռնարկ ,  
Հեղինակներ՝ Յու. Ա. Ամիրջանյան , Ա. Ս. Սահակյան / «Մանկավարժ» 2005 /